

ռաջին պատկերով, որովհետեւ երկ-  
րորդը մենք համարում ենք անլաջող,  
բան է՝ արտապատող. Մի նկատողու-  
թիւնն է, ինչպէս ասացի, ալս գըր-  
քովը թարգմանած է Համբի պատ-  
մածի ռուսերէն իրատարակութիւնից.  
ինչո՞ւ ուրեմն գրքովի երեսի վերայ

չը լիշատակել Համբի անունը, փո-  
խանակ գրելու «ըստ Շէքսպիրի»,  
«փոխադրութիւն» — բառեր, որոնք  
միայն տարակուսանքի առիթ են  
տալիս:

Մ.

ԼէՍ. — «ԴԱԻԻԹ ԵՒ ՄՀԵՐ» (Ժողովրդական վէպ). Քննադատութիւն.  
Արտատպած «Գրականական և Պատմական Հանդիսից». Մոսկւա. Տպա-  
րան Մկրտիչ Բարխուդարեանի, 1891, Միջին գիրքով. 41 էրես.  
տառ № 12, գինն է 15 կոպէկ:

Պր. Լէօններկայ գրքովը կարդաց-  
ւում է մեծ հաճութեամբ: Նա հար-  
կաւոր գրքով էր և նորա երևան  
դալուն պէտք է շտտ ուրախ լինել:

«Դաւիթ և Մհեր»-ը հալ ժողո-  
վրդական վէպի մնացորդներից մէկն  
է: Նա պատմում է Սասունի գիւ-  
ղական ժողովուրդի շրջանում շատ  
հին ժամանակներից և հասել է մինչև  
մեր օրերը, պահպանելով իւր մէջ հին  
վէպի ոգին և կաղնութիւնը և մա-  
սամբ փոփոխւած դանազան ժամա-  
նակների ազդեցութիւնից:

Սասունական վէպից առաջիմ  
չալանի են երկու մեծ կտոր, որոնցից  
մէկը դառն է հայր Գ. Սրուանձտեանը,  
իսկ-միւսը պ. Մ. Արեղեանը: Սրուանձ-  
տեանի գտած կտորը չալանի եղաւ  
1874 թւին «Սասունցի Դաւիթ կամ  
Մհերի Դուռ» անունով, իսկ Մ.  
Արեղեանինը 1889 թւին «Դաւիթ և  
Մհեր» անունով:

Լէօն գրքովը վերաբերում է ալս  
վերջին հաջերգութեան: Ալս կտորը

դրած է տեղական բարբառով և հա-  
սարակ ընթերցողների համար իրրե  
նթերցանութեան առարկայ դժա-  
րութիւններ է ներկայացնում:

Լէօն պատմում է մեղ վէպը իւր  
խօսքերով և աշխատում է լուսա-  
բանել վէպի մէջ պարունակուող անց-  
քերի և երեւոթների էութիւնը և  
նշանակութիւնը:

Եթէ ընթերցողը համաձայն ևս  
չը լինի Լէօնի հալալքներից մի  
քանիսի հետ, ալնուամենայնիւ նա  
մեծ հետաքրքրութեամբ կը կարդայ  
գրքովը և կարդացածի մէջ կը դտնի  
կէտեր, որոնց վերայ կանգ կ'առնի  
ուշադիր լինելու ժողովրդական ալդ  
ստեղծագործութեան առանձնապատ-  
կութիւններին:

Թէև գրքովը անւանւած է քննա-  
դատութիւն, բայց նորա գլխաւոր  
արժանաւորութիւնը մեք համարում  
ենք ալն խելօք ձեռով պատմու-  
թիւնը, որ արել է հեղինակը:

Իբրեւ քննադատական մի գրածք

Նա կարօտ է աւելի մանրամասն մշակութեան: «Դաւիթ և Մհերը» արժանի է լուրջ ուսումնասիրութեան և համեմատական քննադատութեան: Այն ակնարկները, որ անում է պ. Լէօն Ֆիրդուսիի Շահ Նամէլի հերոսի վերաբերմամբ, շատ են թուուցիկ և պատահական: Պ. Լէօն հակառակ է կարծելու, որ մեր վէպը ինքնուրույն է և պարսկական Բուստամիադայի արձագանքը չէ: Թէև ալիք կարծիքը հաւանական է, այնուամենայնիւ պահանջում է ուսումնասիրութեան վերադ հիմնաւոր եղբայրացութիւն: Լէօն փորձում է չամենայն դէպս համեմատել Մհերին և Ռուստամին միմեանց հետ՝ իբրև մեծ դիւցազնական ուժեր (թէև տարբեր չափերով): Բայց աւելի լաւ կը լինէր՝ եթէ համեմատութիւնը մնար Դաւիթի վերադ: Առանձին-առանձին առած՝ զուցէ Պարոն Աստղիկին կարելի լինէր մօտեցնել մասամբ Զոհրարին, Սառիալին—նմանեցնել Կելկաուսի երկրորդական կին Սուդաբէին, և այլն: Մհերը ըստ երևութիւն ինքնուրույն դիւցազն է, աւելի հին ծագումով և

զետու է խառնել տեղակոն հերոսների հետ:

Այս համեմատութիւնները դուցէ որոշէին Շահնամէլի և մեր ժողովրդական վէպի մէջ եղած նմանութիւնը (եթէ նա էական է և ոչ պատահական) և տալին մեզ կարողութիւն—ընդհանուր իրանականից—դտելու բուն հայկականը և տեղական պատմականը:

Ըստ երևութիւն Սասունականի (Սասունիադա) հիմքը կազմում է տեղական պատմութիւնը, որի մէջ ծծւել է հին դուստնական դիւցազններգութիւնը: Թողնելով դիտնական քննադատական հետադատութեան մասին մեր խօսքը մի չարմարաւթի—ալժմ պ. Լէօն զրքուկի վերաբերմամբ՝ չալտենք զանկութիւն, որ նա դտնի ընթերցողների մեծ չրջան մեր հասարակութեան մէջ:

Վատ չէր լինի, եթէ մէկը փորձ փորձէր Դաւիթ և Մհեր վէպը աւելի հասարակ և դիւրամատչելի լեզուով տար մեր ժողովրդին—առանձին ածանադին դրբովով:

Քլ.

ԿԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ (Եղիսաբէթ, Թագուհի Բուսինիոյ) «ՕՄՈՒՆ» մանկական վէպ, Թարգմանեց Գրիգոր Շահբուղադեանց:

Ինչ կ'ասէիք մէկին, որը տեսնելով խեղճուղին և ձեռքի տակ ունենալով նաև փրկելու միւս գործիքները, դէն շաղտէր ալիք բոլորը և ինքն նետէր կատաղի հոսանքի մէջ, խեղտուղին փրկելու համար. չէիք ասիլ, որ նա անմիտ է վարւում, որ նա չէ օգտուում իւր ձեռքի տակ

եղած միջոցներից իւր մերձաւորին փրկելու համար: Աւելի խիստ չէիք գատապարտիլ մի արքայազնի, որը սաստիկ ծարաւ ունենալով թեթեւացնել տառապեալների և թշուառների վիճակը, թողնում է հալոնական տունը և դորա հետ միասին ապագալում թագաւոր լինելու ցուցը և հա-